

Մարզպետը շրջայց կատարեց համայնքներում

Մայիսի 23-ին մարզպետ Գաբրիել Գյոզալյանն այցելեց մարզի համայնքներ, որպեսզի ծանոթանա „Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքները: Արտենի. Արագածավան, Դաշտադեմ, Թալին, Ուջան, Աշտարակ համայնքներում նա շրջայց կատարեց պետական, մարզային եւ համայնքային ճանապարհներում, հանրային բնակավայրերում, միաժամանակ ծանոթացավ գործող աղբավայրերի իրավիճակին:

Մարզպետին, ընդհանուր առմամբ, գոհացրեց սանիտարական մաքրման աշխատանքները: Նրա այցելած վայրերը մաքուր էին եւ հավուր պատշաճի բարեկարգ: Նա որոշակի անհարթություններ նկատեց, ինչի ուղղման կապակցությամբ տվեց հանձնարարականներ:

Սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքները շարունակվում են: Մայիսի 27-ին մարզը կմիանա համապետական շաբաթօրյակին, որի արդյունքում կամբողջանա բնակավայրերի մաքուր եւ բարետես նկարագիրը: